ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Նախագիծ

Կ-217-26.02.2013,18.03.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177 օրենքի 11-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Հայաստանի Հանրապետությունը կարող է հիմնադրել արտահանման ապահովագրությամբ զբաղվող ապահովագրական ընկերություն և (կամ) լինել այդ ընկերության մասնակից: Այդ ընկերությունն իրավասու է իրականացնել արտահանման ապահովագրություն, վարկի ապահովագրության դասով, երաշխիքի տրամադրման դասով և ֆինանսական վնասների դասով (ներառյալ՝ այդ դասերի ներքո ընդգրկված ենթադասերով) ապահովագրություն՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիայի հիման վրա: Այդ ընկերության ընդհանուր կապիտալի չափը ստեղծման պահին պետք է լինի Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների համար սահմանված ընդհանուր կապիտալի չափից ոչ պակաս: Այդ ընկերության գործունեության ընթացքում ընկերության ընդհանուր կապիտալի չափը ՀՀ տարածքում ապահովագրական ընկերությունների համար սահմանված ընդհանուր կապիտալի չափից նվազման դեպքում այդ կապիտալի համալրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահրամ Բաղդասարյան	Առաջարկում ենք, Օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «միայն վարկի, երաշխիքի տրամադրման և» բառերը:	Ընդունվել է:	Հոդվածը խմբագրվել է:
ՀՀ ԱԺ պատգամավորներ Վարդան Այվազյան, Միքայել Մելքումյան, Վահրամ Բաղդասարյան, Հակոբ Հակոբյան (041), Ռուբեն Սադոյան, Արման Սահակյան	Առաջարկվել է. Ստեղծվող ընկերության հիմնական գործունեությունը հստակ սահմանել որպես արտահանման ապահովագրության գործունեություն:	Ընդունվել է:	Հոդվածը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «ֆինանսավորման» բառը:	Ընդունվել է:	Հոդվածը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերը փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է:	Հոդվածը խմբագրվել է: